## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

# «ԵՒ ՀԱՍՏԱՏԵԱԼ ԱՄՐԱՑՈՒՑԵՐ ՍՈՒՐԲ ԹԱԳԱՒՈՐՈՔ»

Հայ եկեղեցին ամեն տարի, հուլիսին, երախտագետ զգացմունքներով նշում է հիշատակը որպես սրբերի՝ Տրդատ Գ. արշակունի թագավորի, Աշխեն թագուհու և արքայադուստր Խոսրովիդուխտի , որոնց անունն ու գործունեությունը սերտորեն կապված են 3-րդ դարի վերջին տասնամյակում և 4-րդ դարի առաջին քառորդում, Հայաստանում, քրիստոնեական կրոնի հաստատման աշխատանքների և Ս. Գրիգոր Լուսավորչի առաքելական, մշակութային պատմական գործունեության հետ:

4-րդ դարը ինչպես ընդհանուր քրիստոնեական եկեղեցում, այնպես էլ հայ եկեղեցու պատմության մեջ ներկայացնում է վերին աստիճանի հետաքրքիր և ուսանելի մի ժամանակաշրջան:

Ինչպես հունա-հռոմեական կայսրության մեջ, այնպես էլ Հայաստանում քրիստոնեության արտաքին դրության մեջ առաջ եկած հիմնական փոփոխությունը եկեղեցու ներքին կյանքի աճին, կազմակերպության և հեթանոսության դեմ նրա տարած վերջնական հաղթանակի համար, ունեցավ պատմական, վճռական նշանակություն:

Առաջին չորս դարերի ընթացքում քրիստոնեական կրոնի և մշակույթի դեմ մղված հեթանոսական պայքարը, հալածանքները չկարողացան ջլատել եկեղեցու հոգևոր կյանքի անսպառ կենսունակությունը: Արտաքին և ներքին աննպաստ պայմանների մեջ եկեղեցին ապրեց, շնչեց լիակատար կյանքով և հաղթանակեց:

4-րդ դարում Հայաստանում քրիստոնեական կրոնի և մշակույթի հաղթանակը պատմականորեն կապվում է հայ արշակունի Տրդատ Գ. թագավորի անվան հետ, որը հանդիսացավ Ս. Գրիգոր Լուսավորչի **գործակիցը, առաքելակիցը**, ինչպես այդ մասին վկայում են Ագաթանգեղոսը, Խորենացին, Ղազար Փարպեցին և օտար պատմիչներ: Մեր շարականագիրը հարազատորեն է բնութագրել Հայաստանում քրիստոնեության հաղթանակի համար հայ թագավորի կատարած աշխատանքը, երբ գրում է.

«Որ զարդարեսդ գեղապանծ վայելչութեամբ Սուրբ եկեղեցի, պսակեցեր առաքելովք և մարգարէիւք և **հաստատեալ ամրացուցեր սուրբ թագաւորաւք**» (շարական):

4-րդ դարի առաջին քառորդում Հայաստանում կատարված քաղաքական, կրոնական հեղաշրջման մեծագույն դեմքը, Լուսավորչի հետ, հանդիսանում է Տրդատ Գ-ը: Առանց Տրդատ թագավորի օժանդակության, համագործակցության, հովանավորության Ս. Գրիգոր Լուսավորչի առաքելական, կազմակերպչական, մշակութային մեծ գործունեությունը և Հայաստանի ամբողջական դարձը դեպի քրիստոնեություն կդառնային դժվարին, կասկածելի, եթե ոչ անկարելի:

Այս մտածումների լույսի տակ մեր հին պատմիչներն ու մատենագիրները Տրդատին համեմատել են քրիստոնեության երբեմնի հալածիչ Սողոս Տարսոնացու հետ,

որը եղավ հետագայում քրիստոնեության մեծագույն առաքյալը՝ Պողոսը:

Ագաթանգեղոսը Տրդատին համարելով առաքելակից Ս. Գրիգոր Լուսավորչին գրում է. «Ո՛րպէս և զիա՛րդ եկեալ, իբրև **Լուսաւորք ծագեցին փարատել զմէգ խաւարի ի Հայաստան աշխարհի, կամ ո՛րպէս անձինս իւրեանց փոխանակեցին ընդ Աստուծոյ ճշմարտութեանն»** (Ագաթ. «Պատմություն Հայոց», Թիֆլիս, 1914, Առաջաբան, էջ 15):

Երկնային նախախնամությունը այս երկու լուսավորիչների ջանքերով «գթացեալ այց արար Հայոց աշխարհին» (Ագաթ., էջ 16):

Բազմաբանաստակ Լեոն խոսելով Տրդատի օրոք մեր երկրի և ժողովրդի կյանքում կատարված նվաճումների մասին, նրան արդարորեն համարում է **«քրիստոնյա մեծագործ թագավոր»** (Լեո, Երկերի լիակատար ժողովածու, Ա հատոր, Հայոց պատմություն, Երևան, 1966, էջ 448):

Մեծ արշակունին որդին էր «քաջին Խոսրովու արքային Հայոց»: Ինքն էլ «քաջ, առաքինի, ուժեղ և պատերազմող, որքան զամենայն նախնիսն, քաջ եղեալ զանցոյց արութեամբք»:

Տրդատը Հռոմում զինվորական փայլուն կրթություն ստացավ, տիրապետեց հելլեն լեզվին ու դպրության, փիլիսոփայական արվեստին ու կրոնների պատմության:

Մեծն Խոսրովու այս արժանավոր որդին իր իմացական ուշիմությամբ, իր ֆիզիկական արտակարգ և առակի կարգ անցած ուժովն ու քաջագործություններով, որոնք նյութ դարձան Գողթան երգիչների համար, նշանավոր հանդիսացավ Հռոմեական աշխարհի մեջ, արժանանալով նաև կայսրերի համակրանքն ու պաշտպանության: 297 թվականին Տրդատը տիրացավ դավադրությամբ սպանված իր հոր՝ Խոսրովի գահին և հայրենի ժառանգությանը: Նա իշխեց 40 տարի: Դրանք խաղաղության տարիներ էին, երբ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին հայ պետության կենտրոնացման և ամրապնդման համար:

Տրդատի երկարամյա թագավորությունը անցավ ընդհանրապես խաղաղության մեջ: Նա կարողացավ երկու հարևան, բայց թշնամի պետությունների՝ Հռոմի և Տիգրանի միջև պահպանել հայ պետության ինքնուրույնությունն ու անկախությունը կայուն և տևական խաղաղությամբ:

Իր թագավորության օրով Տրդատը աշխատում էր պետական, մշակութային, հոգևոր վերանորոգում մտցնել հայ ժողովրդի կյանքի մեջ, ամրապնդել ազգային գիտակցությունն: Իր գահակալության 40 տարիների ընթացքում Տրդատը տոգորվել էր հայրենասիրական խորունկ զգացմունքներով: Նա ցանկանում էր **քաղաքականապես, մշակութապես, տնտեսապես** վերակենդանացնել Հայոց աշխարհը:

Երկու մեծ հայրենասերներ՝ տարբեր հոգու տեր մարդիկ, տարբեր դաստիարակությամբ, տարբեր համոզմունքներով ու հայացքներով՝ Անագ իշխանի որդի **Գրիգոր Պարթև** և Խոսրով Հայոց արքայի որդի **Տրդատ արշակունին**, սիրտ ի սիրտ և ձեռն ի ձեռն լծվում էին հայրենիքի վերուշինության նվիրական աշխատանքներին սրտեռանդ համագործակցությամբ: Լուսավորիչ՝ «կամօքն Աստուծոյ, վարդապետութեանն Քրիստոսի պատգամաւոր գտեալ», իսկ «բարեացապարտն Տրդատ... աշխարհածնունդ հայրենեացն որդի գտանէր շնորհօքն Աստուծոյ»:

301 թվին առաջինը աշխարհում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց մեր երկրում, մի հանգամանք, որը մեր երկրի և մեր ժողովրդի համար ունեցավ քաղաքական, կրոնական, պատմական մեծ նշանակություն: Տասներկու տարի հետո միայն հռոմեական կայսրության մեջ Մեծն Կոստանդիանոսի օրոք Միլանոյի դաշնադրությամբ, քրիստոնեությունը ազատ կրոն էր հռչակվում:

Քրիստոնեությունը հանդիսացավ Հայաստանում սկիզբ առնող ազգային, կրոնական վերազարթոնքի, մշակույթի գաղափարախոսական հիմքը և վճռական դեր խաղաց երկրում հայ պետականության հիմքերի ամրապնդման, հայ ժողովրդի ազգային գիտակցությունը վառ և միասնական պահելու տեսակետից: Տրդատի ջանքերով քաղաքականապես վերակենդանացած Հայաստանը և Լուսավորչի քարոզչությամբ հին, հեթանոսական բարքերի և մտայնության «մէգն ու մառախուղը» թոթափած հայոց երկիրը ոտք էր դնում հոգևոր, ճշմարիտ վերածննդյան ճանապարհի վրա:

«Լցաք առաւօտու ողորմութեամբ քո, Տէ՛ր» (սաղմ. ՁԹ. 13):

Հայոց երկրի վրա և հայ հոգիների մեջ ծագել էր նոր կյանքի և հավերժության լույսը:

Գրիգոր և Տրդատ՝ մտերիմներ և բարեկամներ՝ անցան գործի: Ամեն կողմ տիրում էր նորահավատների հատուկ խանդավառություն, ոգևորություն, խնդալից փույթով և խոր երկյուղածությամբ: Հայ հողի վրա համայնական աղոթքով ու աշխատանքով

բարձրանում էին առաջին հայկական տաճարները:

Լուսավորիչը ճարտարապետական լարը ձեռքին դնում էր հիմքերը հայկական տաճարների՝ Էջմիածնի Մայր Տաճարի, Ս. Հռիփսիմեի և Ս. Գայանեի, մինչ Տրդատը «Հայկաբար» Արարատի լանջերից հսկա ժայռեր և մեծ քարեր էր բերում իր թիկունքի վրա տաճարների շինության համար:

Պայքարը հին և նոր կրոնի մեջ, հին և նոր մտայնության միջև շարունակվում էր կատաղի, վճռական: Հայ հեթանոսությունը հեշտությամբ չէր որ զիջում էր իր դիրքերը նոր կրոնքին: Այդ պայքարում Տրդատը միշտ Լուսավորչի հետ էր:

Տրդատի և Լուսավորչի սուրբ մինչև 325 թվականը բացվում էր հոգևոր լուսավորության, առաքելական գործունեության լայն ասպարեզ:

Տրդատի նախագահությամբ 301 թվին Վաղարշապատում գումարվում էր առաջին ազգ. եկեղեցական ժողովը, ուր Լուսավորիչ ընտրվում էր Հայրապետ Հայաստանյայց եկեղեցու, որով վերանորոգվում էր Հայաստանում «քահանայապետութեան Աթոռը» և Լուսավորիչը կաթողիկոս էր ձեռնադրվում «ի տեղի ընտրելոց սրբոց առաքելոցն Թադէոսի ու Բարթուղիմէոսի» (Զենոբ Գլակ, «Պատմութիւն Տարօնոյ», Վենետիկ, 1832, էջ 52):

Հայ եկեղեցին ստանում էր հաստատուն, ամբողջական նվիրապետական նկարագիր:

Լուսավորչի ու Տրդատի առաջ կանգնած կարևորագույն հարցերից մեկն էր նաև ժողովրդի քրիստոնեական դաստիարակության հարցը: Տրդատի մեկենասությամբ և նյութական աջակցությամբ բացվում են առաջին հայ դպրոցները Հայաստանում, թեև օտար լեզուներով, որոնք հանդիսանում են ամուր հենարաններ նոր կրոնի և որոնց մեջ պատրաստվում են նաև հայ եկեղեցու ապագա գործիչներ:

Տրդատի հանձնարարությամբ Ագաթանգեղոսը գրում է առաջին հայոց պատմությունը ապագա հայ սերունդներին հանձնելու համար «զ Հայրենեացն գործս քաջութեան»:

Լուսավորչի մահից հինգ տարի հետո 330 թվականին մահանում է Տրդատը, «աստվածպաշտության բազմաիայլ ճառագայթը», ինչպես նրան բնութագրել է Դուրյան Սրբազանը:

Տրդատը հայոց պատմության ասնցալ որպես անվանի զորավար, հմուտ դիվանագետ, պետական մեծ գործիչ և դարձալ հայ եկեղեցու թագակիր միակ Սուրբը, որի տոնը ամեն տարի կատարում է մեր եկեղեցին սիրով և երախտագիտությամբ, համարելով նրան **առաքելակիցն ու գործակիցը** Ս. Գրիգոր Լուսավորչի, 4-րդ դարի առաջին քառորդում Հայաստանում կատարված պատմական, կրոնական, մշակութային հեղաշրջումների մեջ: